

ԿՍԱՆ ՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի, կես տարվան 6 ռուբ.
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлис, Редакция „Мелк“.
Կամ Tiflis, Redaction „Mschak“.
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիզումով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խրաբանչիւր բառին 2 կոպեկի.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Եղբայրացականութեան փորձեր. Հայերի դերը
համայնաբարձրացման գործում մէջ. — ՆԱԽԻՆ
ՏԵՍՈՒԹԻՒՆ. Սուտ վիճակ. Նամակ Երեւանից.
Նամակ Սիւնիքից. Նամակ Խմբագրութեան.
Ներքին լուրեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նոր
հոսանք Սկանդինավիայում. Պատերազմ. Նա-
մակ Թիւրքիայից. Նամակ Պարսկաստանից.
Արտաքին լուրեր. — ՍԱՆԻՆ ԼՈՒՐԵՐ. — ՀԵՌԱԳԻՐ-
ՆԵՐ. — ԲՈՐՍՍԱ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. — ԲԱ-
ՆԱՍԻՐԱԿԱՆ Առօրեայ ցանկերի շարքը:

ԵՂԱՅՐԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՓՈՐՁԵՐ

Սերբիան և Բոլգարիան դարձեալ պատ-
րաստ են յարձակվել միմեանց վրա և ծը-
ւատել միմեանց: Այնքան հաւանական է
վերաւ այդ երկու հարեւան և համացեղ ազ-
գերի արեւմտահայ մեծամարտութիւնը, որ
բոլգարական պաշտօնական մամուլը չէ կարո-
ղանում ստանաբարութիւն պահպանել և
յայտնում է, որ եթէ Սերբիան, ճիշդ որ,
մի դատարկ պատճառ բռնած՝ պատերազմ
կայտարարէր, Բոլգարիան չի տատանվի
ընդունել այդ արեւմտ հրաւերը: Դրու-
թիւնը, ուրեմն, բաւական վտանգաւոր է:
Այն ժամանակից, երբ Սերբիայի նախկին
Թագաւոր Միլան, կշտանալով Պարիզի դը-
ւարձութիւններից, իրաւաբաժան Սերբիա
և Նորից առաջին մարդ դարձաւ իր որ-
դու Յովանաւորութեան տակ, սերբ-բոլ-
գարական ընդհարումը աւելի և աւելի
հաւանական է դառնում: Եւ ո՞չ զիտէ,
գուցէ մենք չուտով վկայ կը լինենք մի
նոր, դատապարտելի, եղբայրացական պա-
տերազմի, որի նմանը տեսանք 1885 թը-
ւին: Այն ժամանակ էլ Միլան կուր սկսեց
եօթը տարի առաջ ազատութիւն ստացած
Բոլգարիայի դէմ և սաստիկ ջարդկեց: Այն
ժամանակ էլ սերբիական Թագաւորը դե-
կլարավում էր իր ինքնապաշտօնական նպա-
տակով, խաղաղք էր դարձել օտար պե-
տութիւնների ձեռքում: Իսկ այժմ Իսթ-
անի նոր շարժաւորութիւնը, դարձեալ նոր
խաղը:

Այժմեան ժամանակ, երբ ամեն տեղ
փառօրէի հոտ է տարածված, պատերազմի
խրաբանչիւր փորձ, որ չունի հիմնական
պատճառներ, դատապարտելի է: Ազգերի

մէջ եղբայրութիւն են քարոզել մարդկու-
թեան ամենամեծ բարեկամները: Իսկ որ
ազգեր կարող են ամենից առաջ ձգտել
այդ յաւիտեական գաղափարի իրագործ-
ման, եթէ ոչ նրանք, որոնք եղբայրակից
են, ունենալով մի ընդհանուր ծագում,
պատկանելով մի և նոյն ցեղին: Ըստ երե-
ւոյթին, Բոլգարիան և Սերբիան կարող են
ապրել միմեանց կողքին իբրև բարի դրա-
ցիներ. երկուսն էլ փոքրիկ պետութիւն-
ներ, երկուսն էլ համեստ շահերի տէր:
Մի ժամանակ պաւստական այդ հատուած-
ները այնքան մօտեցել էին միմեանց, որ
ուզում էին մի ընդհանուր դաշնակցու-
թիւն կապել՝ պաւստական շահերը փոխա-
դարձ աջակցութեամբ պաշտպանելու հա-
մար: Այժմ այլ ևս խօսք չը կայ համերաշ-
խութեան կապերի մասին, այլ նորս իսկ
լրվում է պատերազմի ձայն: Այլ մոցրեց
այդ երկու պետութիւնների մէջ: Սերբ մասամբ այն
արկածախնդիրը, որ հրաժարվելով զահից,
վատեց իր երկրի միլիոնները արտասահ-
մանեան զուարճութիւնների մէջ և այժմ
ուզում է 13 տարի առաջ իր կրած ամօ-
թայի պարտութեան վրէժը հանել:

Բալկանեան թերակղզում իւրաքանչիւր
կայծ ահագին հրդեհ կարող է պատճա-
ռել եւրօպայում: Եթէ Միլանին աջողի
սկսել այդ հրդեհը, նա կը գործէ մի սոս-
կալի ոճիր, — քանի որ երկու փոքրիկ եղ-
բայր-պետութիւնների պատերազմը բացի
ներքին թշուառութիւններից, այն հետե-
ւանքը կունենայ, որ աւելի ոյժ կը
տան ընդհանուր թշնամուն — Թիւրքիային:

ՀԱՅՏԵՐԻ ԴԵՐԸ ՀԱՄԱՐԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՊԱՏՄՈՒ- ԹԵԱՆ ՄԵՋ

Կիւնով, պրօֆեսոր Գրէնի խմբագրութեամբ
հրատարակվող «Россия и Азия» շաբաթական
մի ամբողջ համարը, որ հրատարակվել է մայի-
սի 15-ին, բացառապէս նուիրված է հայերին և
պարզէս էլ կոչված է «Հայկական համար»: Ա-
ռաջ ենք բերում այդ հետաքրքիր համարի առաջ-
նորդը, որ կրում է վերոյիշեալ վերնագիրը:

Երկրագնդի վրա ապրող ազգերի կաշխուղ-
պի մէջ ազգերից մի քանիսին կարծես վիճակ-
ված է տնօրինել ազգութիւնների վիճակը, իսկ

միւսները, հեռու մնալով այս շարժումից, ծա-
ռայում են պատմութեան կամ անցեալի մնա-
ցորդները և աւանդութիւնները պահպանելու
համար, կամ թէ բացառապէս որ և է կուտու-
րական միասին կառարեւելու համար: Այս վերջին
խմբի ազգութիւններից մէկը պէտք է, անկաս-
կած, համարել հայերին, որոնք պատկանում են
մեր ազգակից արեւմտ ցեղին: Այս փոքրիկ,
չնորձալի և իր աշխարհագրական դիրքով հեռա-
բոլորական ժողովուրդը շատ հազար տարիներ
Քրիստոսից առաջ Փոքր Ասիայի առաջնակարգ
ազգ էր, որ տնկեց այնտեղ Եդիպտոսի քաղա-
քակրթութեան սերմերը և ազգում էր յօնիական
Յուդայականութեան վիճակի վրա: Յետոյ, բաժան-
վելով բազմաթիւ մանր ցեղերի, նա նորից
միանում է Մարաստանի առաջնորդութեամբ
և նուաճում է Վերին Եփրատի ու Արաքսի
հովիտները: Այստեղ նա առաջիններից մէկն
էր, որ իւրացրեց պարսկական և մակեդո-
նական կուլտուրան, տարածելով նրան Կովկասի
բոլոր սահմաններում: Հռօմայական տիրապե-
տութեան ժամանակ նոյն այս չնորձալի ազգը
հռօմայական քաղաքացիութեան միջնորդ հան-
դիսացաւ Կովկասում և Պարսկաստանում: Նա
անկում է քրիստոնէութիւնը ամբողջ Կովկասում,
տալիս է գիտտիկների թրիստոնէական դպրո-
ցին լատինայի ուսուցիչներ, վերջապէս ստեղ-
ծում է Կովկասեան պատմական մեծածաւալ
գրականութիւնը: Յանձին իր Բագրատունեաց
հարստութեան նա ուղղակի հաստատում է իր
կուլտուրան, իր արեւմտ Կովկասեան ամբողջ
պարսկացի վրա: Նա ծառայում է և հաւատով
ազգակից Բիւզանդական կայսրութեան, տալով
նրան իրաւաբանների, պետական մարդկանց և
նոյն իսկ կայսրերի մի ամբողջ շարք: Բայց
սրանով չը վերջացաւ հայոց ազգի գործունէու-
թիւնը: Զարգվելով, զննչացնելով սելջուկեան
թիւրքերից, նա բոլորովին անսպասելի կերպով
տեղափոխում է իր գործունէութիւնը հիւսիս,
ուղղափառ Վրաստանը, իսկ հարաւում ստեղ-
ծում է Կրիկիայի Ռուբինեան անկախ իշխա-
նութիւնը, որ շատ անգամ թրիստոնէաների նե-
ցովին ու օգնականին էր իրազեկիւնների արշա-
ւանդների ժամանակ: Աստատական, բայց կա-
նօնաւոր քաղաքացիութիւն չունեցող Վրաստա-
նը հայերից քաղաքացին դատակարգ ստեղծեց,
որ դրազկեց արեւմտեանը և վաճառականու-
թեամբ: Իսկ յետոյ, երբ պարսից շահերը դար-

ձան Կովկասի իրական տիրապետողները, նոյն
հայերը առաջին անգամ առեւտրական յարաբե-
րութիւններ սկսեցին եւրօպայի հետ և դարձան
միջնորդներ եւրօպացիների և պարսիկների մէջ:
Այս բոլոր փոփոխութիւնների մէջ պահպանելով
իրանց ընտանեկան բարոյականութիւնը, հայերը
յետոյ Թիւրքիայում զարկ են տալիս գրականու-
թեան, իսկ Կովկասում հանդիսանում են միջ-
նորդ ուսուց քաղաքացիութիւնը տարածելու
համար: Միայն այս ցուցակը բաւական է հայոց
ազգի իսկական քաղաքական դերը պարզելու
համար:

Ամեն կողմից շրջապատված Ասիայի հզօր
ինքնակալներով, ոչ մի տեղից բարոյական ա-
ջակցութիւն և օգնութիւն չը տեսնելով, նրանք
հենց այս պատմական ճակատագրի աղիւնդու-
թեամբ քաղաքակրթութեան միջնորդներ հանդի-
սացան: Եթէ յոյն ուզում էր մի բան իմանալ
Կովկասի մասին, օրինակ, ամապօն կանանց մա-
սին, նա դիմում էր հային և այս վերջինը
պատմում էր ինչ որ լսել էր: այս իսկ հայը չէր
խորշում իմանալ մի ճանապարհորդից նրա պատ-
մութիւնը և դիտել Արեւելքի անցեալ կեանքը
պայծառ և գրաւիչ պատկերի մէջ: Նոյն այդ
պատմական ճակատագրի չնորձաւ հայը չէր կա-
րող ցոյց տալ իր բանաստեղծական չնորձը:
Այդքան ազգեցիկ մէջ բանաստեղծութեան մա-
սին չէր կարելի մտածել, բայց հայը հոգով բա-
նաստեղծ մնաց, և երբ ուսուց իշխանութիւնը
հաստատվեց Կովկասում, թափվեցան Սայեաթ-
Տոպայի, Գամառ-Քաթիպայի դիւթիւք երգերը:
Ուրեմն հայերի դերը դուռ կուլտուրական է և
ոչ թէ քաղաքական և վերապահ նրանց սկզբնա-
տական ձգտումներ՝ նշանակում է չը հաս-
կանալ ազգի ոգին:

Հայերին մեղադրում են ազատութեան, խա-
բեղայութիւնների մէջ և այլն, բայց մոռանում
են, որ նրանք միշտ եղել են, այսպէս ասած,
մարկիտաններ պատերազմի դաշտերում: Այս
դրութիւնը պիտի տար նրանց ժառանգեան
սաղմեր: Նրանց անուանում են խաբեղաներ,
բայց մոռանում են միւս ազգութիւնների վա-
ճառականութիւնը: Սակայն ոչ որ չի աշխատի
գտնել այդ հայերի մօտ կանոնաւորութիւն-
ներ, խեղճութիւնը և փայլուն ընդունակութիւն-
ները: Այդ ազգը չունի պաշտպաններ, որովհե-
տե նախ՝ նա դաւանում է բոլորովին ուրիշ
քրիստոնէական կրօն, լուսաւորչականութիւն, և

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՌՕՐԵԱՅ ՑԱԽԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Վերջին ժամանակները «Մշակ» մէջ լայն
տեսած մի քանի յօդուածները՝ անարժան մարդ-
կանց հոգեւոր կոչում տալու մասին՝ աւելի են
տալիս կրկին անգամ մի ակամայ հայեացք դը-
ցել և մեր հոգեւորականութեան ներկայ դրու-
թեան վրա: Նախ քան մեր խօսքը մասնաւորելը
այդ մասին, յիշատակենք մի երկու դէպք,
բնորոշելու համար թէ ինչ պահանջներ է ա-
նում այժմ հասարակաց կարծիքը մեր հոգեւոր
հայրերից:

Իրանդիայի Դուլին քաղաքում մի այլի կնոջ
ժառանգութեան իրաւացի պահանջը դատարա-
նում պաշտպանում էր նրա ծխատէր քահանա-
նան, որը չը նպաստ հակառակորդ կողմի ուժեղ
լինելուն՝ տարաւ այդ դատը և ազատեց իր
ծխականին հարստահարվելուց: Անողբակցի քա-
ղաքի բուժարանի հաշվեմասնակներում գեղա-
տոմների 15% ծխատէր քահանաների դրածն
են, և այդ գեղատոմներով աղքատ ազգաբնա-
կութեան համար բաց են թողնված զանազան
դեղեր, բժշկական անոթներ և քանակաւոր դեղեր
կարելի է թել ուրիշ ազգերի հոգեւորականու-
թեան գործունէութիւնից — չը հաշուած, ի հարկէ,
նրանց մտաւոր և բարոյական զարգացման
բարձրութիւնը, որ ամեն օր ժողովուրդը տես-

նում է, երբ նրանք բեմ են բարձրանում քաղա-
քներ: Այդ բոլորը, անկասկած, պարզ ապացոյց
է նրանց առաջադիմութեան և քաղաքակրթու-
թեան և մենք հայերս դեռ չենք չտալում այդ-
պիսի պահանջներ անելու և մեր հոգեւորակա-
նութիւնից, բանի որ ինքնբոս էլ կուլտուրական
զարգացման միջին աստիճաններին էլ չենք հա-
սնել, բայց այնու ամենայնի կատարեալ իրա-
ւունք ունենք կրկնելու և մինչև իսկ պահանջե-
լու, որ մեր հոգեւորականութեան անդամներին
վիճակը աւելի էլ չը վատացնեն՝ զանազան համ-
բակներ և տգէտների ձեռնադրութեամբ: Եւ
իբրեւ, վերջին ժամանակներս կատարված մի քա-
նի ձեռնադրութիւնները, որ միմյանց դրամներ
յարուցին մեր մէջ, հիւսն տուին նորից հաստա-
տելու այն կարծիքը, թէ մեր սրբազանները
հենց իրանք են վայր գցում քահանայական կոչ-
ման բարձրութիւնը և նուիրականութիւնը:

Որ դա փաստ է, մենք մասնաւոր իմանենք
միայն այն իրողութիւնը, որ ձեռնադրում և լի-
նական գաղութներն աւարտած տասնեակ երի-
տասարդներին հոգեւոր կառավարութիւնը մերժեց
հոգեւոր կոչում տալ այնպիսի պատճառներով,
որ ոչ միայն անհիմն, այլ նոյն իսկ ծիծաղելի
էին, և ընդհանրապէս, առաջ քաշեց համարմուն-
քի լեզուները, հիմնեց նրանց համար տիրա-
ցութեան, ձեռնադրեց նրանց և ցրվեց գաւառ-
ները՝ մեր թշուառ ժողովուրդի ցաւերը շատացնե-
լու համար:

Մի առ մի թել չարժէ այնտեղ, թէ տգէտ-
ների ձեռնադրութիւնը ինչ սպանիչ ներգործու-
թիւն է անում մեր ժողովուրդի վրա. կանոնը
միայն այն, որ բազմաթիւ ջանքի կանանց, նը-

շանկած օրերդներ և երիտասարդների անձ-
նասպանութեան պատճառները դաւաններում
մեծ մասամբ քահանաներն են լինում: Մամուլը
պարբերաբար հաղորդում է մեզ անվերջ փա-
տեր: Ահա, «Գ. դիւլում» 13 տարեկան մի աղջիկ
ամուսնացրին 55 տարեկան մի մարդու հետ,
որ մի գութմար էր խոստացել տալ աղջկայ
ծնողներին, ամուսնութեան երկրորդ օրը աղջի-
կը փախել էր հօրանց տուն, բայց դարձեալ
ծեծելով ու չարչարելով տարան իր ամուսնու-
տունը. — մի այլ փաստ. «Մ. դիւլում» խեղդա-
մահ եղաւ 16 տարեկան մի աղջիկ, որին բըռ-
նութեամբ ամուսնացրել էին իր ատած երիտա-
սարկի հետ: — էլլի մի փաստ. «Շ. քաղաքում» օրը
ցերեկով գնդակահար արին մի երիտասարդ, որ
մի չարախ առաջ ամուսնացել էր մի օրերդի
հետ, ասում են, որ սպանողը սիրահարված է
եղել սպանածի նշանածի վրա և մի քանի
անգամ գոռաչարել է չամուսնաւալ իր հարս-
նացուն հետ: Եւ այլն և այլն:

Մարդ ակամայ հարց է տալիս. — ինչու: Որով-
հետե քահանան պատկում է հակառակ ամուս-
նացողների կամքի, հակառակ նրանց սեռական
պայմանների և առողջութեան պահանջների,
հակառակ նրանց բարոյական արժանաւորու-
թիւնների և այլն: Վերջին կէտը մենք չենք տու-
նք այն պատճառով, որ անառականութեան բո-
ւրից եղած մի 40 տարեկան մարդ, որ իր երի-
տասարդական առաքնութիւնները և բարոյա-
կան մաքրութիւնը կորցրել է քաղաքներում
վերադառնում է գիւղը և ամուսնանում մի
մատղաշ օրերդի հետ, որ ուզում է ապրել
սակայն աւան, նա գերեզման է մտնում դեռ:

25 տարեկան չը հասած, իսկ ամուսնը վերա-
դառնում է նորից քաղաք իր բաղդը որոնելու:
Կունքի, հարսանիքի և թաղման ծիսակատա-
րութիւնների ժամանակ մեր քահանաների ա-
ռած պահանջները, նրանց չարչիական հաշիւները
և վաշխառական սխաները միայն ամբողջ
զուգահեռ են շարժում: Օրինակների կարիք ան-
գամ չը կայ, որովհետե իւրաքանչիւրը ակնաւ-
տես կամ ականջաւոր եղած կը լինի այդօրի-
նակի դէպքերի: Մեր հոգեւոր կառավարութիւն-
ների ատեաններում տարիների ընթացքում շա-
բաթական բարդիկ են և բարդվում են այդ տե-
սակ պահպաններ, սակայն մինչև այսօր դար-
ձեալ չարահանկութեան, որովհետե ինչքան էլ
քահանայի յանցանքը ծանր է եղել և պատարա-
կելի, այնու ամենայնի ընտելութեան վերջը ոչ
մի պատիժ չէ տրվել նրան:

Բացի նրանից, որ դէթ տօն օրերը ժողովուր-
դը մի խօսք չէ լսում քահանայի բերանից, բա-
ցի նրանից, որ մտաւոր բարձրութեան կողմից
նրանք ուսմանից չեն տարբերվում, գտնէ ի-
րանց բարոյական մաքրութեան և քաղաքա-
վայել կենցաղակարութեամբ ցոյց չեն տալիս,
որ իրանք հոգեւոր և ոչ հոգեան հայրեր են:
«Գ. դիւլում» սրանից երեք տարի առաջ մի օր
պրիտաւոր ժողով գումարեց և գողութիւնը վեր-
ջացնելու համար հարցրեց մի քանի կարեւոր
խորհուրդներ գիւղական հասակաւոր մարդկան-
ցից, ի միջի այլոց հարցրեց թէ՞ որոնց վրա
կասկած ունեն: Երիտասարդներից մինը պա-
տախտանց, «Պոլոն» տէր Մ. — ին էլ նշանակեց
գողերի շարքում, որովհետե ինքը ինձ պատմեց
է, որ գիւղերը տուն վերադառնալիս հաւաքներից

երկրորդ՝ հայ վաճառականներին նայելով են մեզ մօտ դատում ամբողջ ժողովրդի մասին: Այսպէս թէ այնպէս, լուսաւոր Ներսիսյան ա- մօթ է հանդիստ նայել և տեսնել, թէ ինչպէս Թիւրքիայի վարքերի բարբարոսները մտրուում և խեղդում են հայերին միայն այն պատճառով, որ նրանք քրիստոնէսայ են: Մեր հրատարակու- թիւնը միշտ սովոր է նայել մանր պլազգի եղ- բայքներին, ինչպէս մարմնով և արիւնով ազգակիցներին և ինչեղծում է ամենքին, որ հայերը նայելու արիւնքներ են, ինչպէս և մենք և եթէ զէնք են վերցրել, դա իրանց կա- շու պաշտպանութեան համար էր: Ապա ուրեմն յիշենք կովկասեան կուլտուրական ազգը և չու- գենք, որ նա վերջացնէ իր կուլտուրական օգ- տակար գործունէութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՍՈՒՏ ՎԱՆԵՐ
(Գիւղական բարքերից)

Մեր գիւղական կեանքի մէջ շատ սովորու- թիւններ, որոնց սկիւրը կորչում է դարերի ան- յայտութեան մէջ և որոնք կապված են պատ- մական կեանքի նախապաշարմունքներով հա- րուստ շրջանի հետ՝ սկսում են անհետանալ: Ա- մենայնպէս գիւղերում անգամ սպառնալու- չափ սակաւացել են անչափաճառ բռնի ամուս- նութիւնները, վերանում են հրամայներին դա- նազան հայտոյնների, «փախչիներ», թիզափողնե- րի ձեռքով կամ զանազան միտքեղական եղա- նակով տանջանքներով բռնակալ սովորութիւնը, համարեա անհետացել է դէպի բռնակալ գի- ութիւնը տաճած նախնիին թերահաւատութիւ- նը, մարդիկ սիրով բռնակալ են, յայտնի չա- փով թուլացել է գիւղական կառուցման եր- ոյքը, ուսման սերն ընդհանուր է դարձել, դա- րոյնների պահանջն անյետաձգել, «Վահի-ճուլ- ները» հասարակական պաշտօններ են վարում, առանց դայթակցութիւն պատճառելու «աղտախ- կայներին» և այլն և այլն: Անշուշտ այդ տղեղ սովորութիւնները ջնջելու մէջ անգլին դեր կա- տարեցին ժողովրդական ընթերցանութիւնը, դա- րոյնները և մամուլը, որ հասարակական բարքե- րի վրա հակող ազդեցիկ պէս կարող էր մուս- ցաւ հարուածել դրանց և ճարտարութեամբ է իր գործը, որ անպայման գովելի է: Կա նաև կեան- քի, կամ ուրիշ խօսքով՝ նոր՝ գիւղի լուսա- ւոր, ցանկալի կողմն է...

Նոր կեանքի հոգը մաքառմանն ու պահանջ- ներին չէ դիմանալով՝ հին կամայ-կամայ մեռ- նում է, ուստի մեզ թուում է, որ հասել է ժա- մանակը որոշելու, թէ մեռնող հին կողքին ինչ է բռնում, ինչ բարքեր, ինչ սովորութիւններ են կամայ ներս սարդում մեր գիւղերը և իշխում պիտուի, որն է ժողովրդի բարոյական մակերեսը՝ ինչ ատրիբուտներ:

Հետաքրքիր դիտողի առաջ, այդ կողմից, գիւղը բաց է անում մի քանի տխուր պատ- կերներ, տղեղ երեւոյթների մի քանի շար- քեր: Այդ տեսակ տղեղ երեւոյթներից ա-

մենահրէշաւորը մենք համարում ենք ուսու- վելայելու և կեղծելու սովորութիւնը, որն այնքան խոր արմատներ է գցել այժմ մեր գիւ- ղերում և այնպիսի մեծ հարուած է հասցնում արդարադատ ուսման գործին: Ապա, մարդասէր օրէնքներն անկարող են դառնում իրանց արդարադատ հոգը հովանին տարածել գրկվածի, հարստահարվածի վրա, որովհետև ուսու վկան երի մի անգլին լէզէ՛մ՝ կազմ- ված նոյն իսկ ամենատղէտ գիւղացիներից, միշտ պատրաստ են խաւարի անխափանցիկ քո- ղով ծածկել լուսաւոր, արդար գործը, թողնելով դատարաններին ապշած, չուարած վիճակի մէջ: Այսպէս՝ Ներսիսի նախնական դատարանի քննութեան է ենթարկված մի քանի իզդիբըլ- ների մի տարբերակ ըրէական գործը: Դատա- րանի սեղանի վրա դրված է մի մուրճակ, որը համարվում է կեղծ, որովհետև այդ մուրճակի տէրը վախճանված է մուրճակի կրած թակա- նից առաջ, այդ թւից առաջ է մեռել, ասում են, նաև պարտապանը, այդ չարատանջ դուր- մենտը այնուհետև չէ գիտնիք ինչ ճանապարհով անցել է հանդուգնալ տիրոջ այրու ձեռքը և այդ ժամանակ յայտնվել է, թէ դա կեղծ է: Այժմ այրին սնդուում է, որ այդ դուրմենտը նա ստա- ցել է որբերի խնամակալից, վերջինս հեղքում է այրու ասածը և հեռացնում է իր վրայից որ և է պատասխանատուութիւն, նոյն իսկ նա դատա- րանում արդարացաւ է: Այժմ մեղադրվում են վկանները, սակայն սրանք էլ յետ չեն մնում առաջիններից և հաստատում են, թէ մուրճակը կեղծ է և թէ իւրօր իրանք ստորագրել են մի մուրճակ, բայց ոչ այս, այլ սրան թէ և նման, բայց իսկական մուրճակ և այն՝ տիրոջ ինկղա- նութեան ժամանակ: Ներկա տարուց առել է, որ այս գործը քննվում է, ամեն անգամ կանչ- վում են տաննակ վկաններ երկու կողմից էլ և դարձանալին այն է, որ մինչև այժմ կարելի չէրու հաստատալու որոշել, թէ իսկապէս այդ- թան ձեռքերից որն է կեղծել այդ չարագուշակ դուրմենտը:

Կեղծվում են ոչ միայն մուրճակներ, այլ և հասարակական վիճիւններ, տանուտէրների ստո- րագրութիւններ, վաւերացումներ և այլն: Տղե- րիս գործը միայն երկու տարվայ ընթացքում մի գիւղում գործադրութիւն է ունեցել հինգ անգամ իբրեւ է կապերու հրաւիրվել դատաստանական քննիչի մօտ: Գիւղերում հարուստ աղաներ կան, որոնք իրանց սեփական՝ վկաններ ունեն, կա- րելի է առել «երգուեալ» վկաններ, ինչպէս լի- նում են երկուսեւ հասարակական տարբերութիւն: Ամեն անգամ, երբ այդ վկանների տէրը, հարուստ աղան, որ և է գործ ունի, լինի դա քրէական, թէ քաղաքացիական, յայտնի մարդիկ միշտ վկայ են, միշտ ակամատու: Այդ վկանների խաւքն է, որ աղաներին վարչութիւն է դարձրել, այնպէս որ նրանցից պէտք է վախենալ, զգուշանալ, հեռու մնալ, դժուար է նրանց հետ մաքառել, 24 ժա- մում նրանք կարող են իրանց վկանների շնորհիւ ձեռք քրէական դատի ենթարկել իբրև յանցա- տու... Եւ աղայի վկանները առանց մաղի չափ անգամ խղճահարկելու ամենամանր ամբաստա-

նութիւններ կը բարդեն ձեռք վրա, ոտնակոխ կանեն լայսի պէս ճշմարտութիւնը, միայն թէ կարողանան շահել իրանց պատճառի սիրտը: Եւ եթէ ապահով են, որ իրանց ստուր չի յայտն- վի, որ իրանք արդարադատութեան ձեռքը չեն մատնի, այն ժամանակ վայ անդորին ու խեղ- ձին, վայ նրան, ով մարդ չունի, թե ու թիկունը չունի:

Խիղճը կորցրած, Աստուծուց չը վախեցող գիւ- ղացին դարձուելի է: Կան առելի հրէշաւոր սո- վորութիւն, քան «փոխանակութիւն» վկայութիւն տալու սովորութիւնը: Մի գիւղում մեզ հաւա- տացնում էին, որ կազմակերպված է մարդկանց մի զուգելի դասակարգ, որոնք փոխադար- ձաբար իրար օգտի տուարդի վկայութիւն տա- լու անարդ, ստոր սովորութիւնն ունեն և կու- վում են փոխանակութիւն վկաններ: Անշուշտ սա կարող է չափազանցութիւն նկատվել, բայց և այնպէս մարդ դարձնում է այդ աստիճան բարոյական այլանդակութեան առաջ: Եւ բանն այն է, որ մեծ մասամբ սուտ վկայելու ուխտով վարակված են գիւղերի առաջնորդները, իշխան- ները, գիւղական-հասարակական գործերի ղեկա- վարները, նոյն իսկ 50—60—70 տարեկան ծե- բուններ, որոնց մի ոտը գերեզմանում է արդէն: Այդպիսիներից մէկը, ասում են, մի անգամ մի ուրիշից օգտի կախալ է ինչդրում և հարցնում, թէ ինչպիսի վարձ կը կամենար դրա համար: «Ոչինչ, տուր այնպէս, պատասխանում է երկրորդը հեղուկութեամբ, երբ հարկ լինի, մի օր իմ օգտին վկայութիւն կը տառ...»

Ան այդ սուտ վկաններ են, որ դաւառական աղաներին, վախառուներին դարձնում են ան- խոցելի, ամենակարող, որանք են, որ յաճախ ի գերեւ են հանում գաւառական ինտելիգեն- ցիայի բոլոր բարեմիտ ջանքերը՝ տապալելու այդ հրէշների ստակալի, սպանել իշխանութիւնը: Եւ սրանց վրա յենված՝ ժողովրդի արին ծծող վամպիրը կարող է առել, թէ ինքը «մի տիկ գինին եթէ ուսուցչի գլխի հետ չի փոխի»: Եւ շատ ընտան, շատ հասկանալի է նրա այս միտքը, քանի որ մի տիկ գինով, եթէ սուտ վկայի սիրտ շահել կարելի է, մինչդեռ եթէ ու- սուցչի գլուխները նրա շահերին վնասելուց դատ, որիչ ոչինչ չեն տալ նրան... Ասելի ցաւալին այն է, որ սուտ վկանների գլուխը դատարանը գիւղերում հասարակական կարծիքի դատապար- տութեան և արհամարհանքի առարկայ չէ դառ- նում, նրանց դէմ չեն զայրանում, նրանք չեն հալածվում, չէ նայելով որ իւրաքանչիւր գիւ- ղացի չափ լաւ խմում է թէ օղ ի կեղծում, օղ ի սուտ: Այդ պայմաններում ուրիշ ոչինչ չէ մնում, բայց եթէ դիմել մամուլի օգնութեան, որպէս զի նա իր հոգը, հեղինակաւոր ձայնը բարձ- րացնի այդ սպանիչ երեւոյթների դէմ: Զարեքը իսկուս մեծ է, կուրս էլ անողորմ պիտի լինի: Ա. Ահարոնեան

ՆԱՍՄԱԿ ԵՐԵՒԱՆԻՑ

Մայիսի 30-ին

Այսօր, վերջապէս, ճշգրիտ քաղաքային ճանա- ւորների ընտրութեան հաստատման լուրը, ո-

րին վաղուց սպասում էին երևանցիները: Ինչ- պէս յայտնի է, մարտ ամսին տեղի ունեցան քաղաքային ընտրութիւնները և չը նայած որ ընտրութիւնները կատարվել են օրինաւոր կեր- պով, բայց և այնպէս թուրքերը բողոք էին տը- ւել նախնական իշխանութեան՝ ընտրութիւնը բեկանելու ու նոր ընտրութիւն նշանակելու հա- մար: Սակայն բողոքը թողնվեց անհետանք, և եղած ընտրութիւնները օրինաւոր համարվելով՝ հաստատվեցին: Յայտարարում համար, որ այս ընտ- րութիւնը տեղի է ունեցել աջող և գիտակցօրէն, առաջ ենք բերում ընտրութիւնների ցանկը և այն, թէ ինչ կարգերի են պատկանում:

Համաձայն ազգաբնակչութեան և ընտրողների թւի՝ Ներսիսի դուստն կազմվում է 50 ձայնա- ւորներից: Ընտրված են հետևեալ 50 անձինք: Վ. Տէր-Սարգսեանց, բժ. Լ. Տիգրանեանց, Գ. Տէր-Խաչատրեանց, Կ. Կամարական, Ն. Մու- րադեանց, բժ. Ուրազով, Սմանով, Փոնդերոնի, Տարդան, Ա. Միսասեանց, Գ. Խանաղատեան, Բ. Նեղաղաբեանց, Յ. Մէլիքեանց, Կ. և Տ. Աֆ- րիկեանց, Միք Բարաբով, Միքա Զարբար Կա- ղեով, Փաշա Խան Մակինսկի, Թ. Փաշանթարով, Ա. Բուխարով, Ա. Տէր-Յովակիմեանց, Ա. Խաչա- տրեանց, Է. Տէր-Գրիգորեանց, Զ. Գեորգեանց, Հ. Գեորգեանց, Ա. Գաբրիէլեանց, Տ. Տէր-Յովակեանց, Ա. Գուլամբեանց, Կ. Կատարեանց, Ն. Միք- օգեանց, Գ. Խեչումեանց, Գ. Անտոնեան, Ա. Խորասանեանց, Ա. Աղաբեանց, Ա. Մեղիքա- րեանց, Գ. Բուխարեանց, Խ. Գիւնեանց, Գ. Միսասեանց, Վ. Տէր-Յովակեանց, Գ. Ամբեանց, Ն. Տէր-Սահակեանց, Յ. և Ա. Կոր- դանեանց, Ի. և Յ. Մէլիք-Աղաբեանց, Գ. Մէլիք Փարսադանեանց, Վ. Պողոսեանց, Ա. Գալստեանց, Ա. Տէր-Գաբրիէլեանց և Ա. Տէր Աւետիքեանց: Յիսուս ընտրվածներից 10 հա- մալարարաւարտներ են.—բժիշկներ՝ 3, փա- տարան՝ 4, ուսուցչի՝ 2, գիւղիներին հսկող—1: Միւս 10 հոգին պատկանում են ինտելիգեն- ցիային և եթէ վկայված մարդիկ են, մնացածը վաճա- րականներ են: Ընտրութիւնը աջող է մանա- ւանդ այն տեսակէտով, որ այս անգամ սկսեցել են մի քանի աղաներ և մաշակներ, որոնք տարբեր- րով կշիռ ունենալով քաղաքային դուստնի մէջ, հանդիսացել են որպէս մի ու օր մաղ շատ լընը՝ դերների դէմ: Վերջին երկու-եքը տարբեր- րով աղաներ մեր քաղաքային ինքնավարութիւնը մի այնպիսի ընտր էր քննած, որ կարծէք բա- ւորովին գոյութիւն չունէր: Մի կողմ թողած շատ լուրջ հարցեր, նոյն իսկ տակաւյի վերա- բերմամբ մի բան չը կարողանաւ անել: Մի բա- նի հաջագործ մաշակներ այնպէս են երես ա- լել, որ ամեն անգամ երբ տեսնուս չէ համա- պատասխանում իրանց ցանկութեան, սկսում են հայր վատացնել և խմուր—հացով կերակրել քաղաքացիներին, և յաճախ էլ նոյն իսկ առանց հացի թողնել անգլին ազգաբնակչութեան: Եւ այդ մէկ չէ, երկու չէ, այլ միշտ, ամեն ամիս՝ Դեռ երէկ շատերը այդ առիթով դիմեցին նա- հանգապետին և բողոք յայտնեցին, մի բողոք՝ որին բաւականութիւն տալը քաղաքային վար- չութեան գործն է: Բայց ինչ անի ժողովուրդը,

հասել է թուցնում և տանում հետը: Սրանք անեկոյտներ չեն, այլ փաստեր: Մի ուրիշ քա- հանա, գիւղական ուսուցչին իր ուրի հանելու համար, հրաւիրում է իր տուն ձայնի և երբ չա- րաքաղ ուսուցչից գիտնալու է՝ ծածկում են կատակով նրա գլխին մի մեծ կաթնայ և ապա ջարդում նրան այնքան, որ թշուառը հաղիւ- տուն վերադառնալով նոյն գիւղը արին է թըռում, իսկ մի քանի օրից յետոյ վերադառնում է Թիֆլիս և ընչ ժամանակից վախճանվում:

Եթէ գաւառներում մեր ուսուցչիները են- թարկվել են ներդրութիւնների և անխափանցի- ների, դրանց պատճառները դարձեալ քահանա- ներն են եղել, որովհետև այդ երկու տարրի ընտան ընթացքը միմեանց ընտանաբար հակա- ռակ լինելով, շարունակ ընդհարումների և վե- ճերի առիթ է տուել: Որքան ուսուցչիչը նուիր- ված է եղել դպրոցի և գիւղի կամ քաղաքի ազ- րաբնակչութեան շահերին, այնքան քահանան, գոնէ մինչև հիմա, հակառակ է եղել այդ շահե- րին: Դէպքեր են եղել, որ ուսումնարանների բնաւ ուսուցչիները հիմք են դրել զբաղարան- ների, իսկ քահանաները նրանց բացակայու- թեան ժամանակ սեփականել, կրանել են այդ զբաղարանները: Գաղտնական շինութիւնների հիմքը մեծ մասամբ դրվել է մի ուսուցչի նա- րաձեռնութեամբ և շինութիւնը աւարտվել է միւսի յորդորանքով, իսկ քահանան գիւղում շարունակ հետամուտ է եղել իր ժաւոցնե- րին և դպրոցի համար մատր մատն անգամ չէ ուղել իսկիւ: Խօսքը, ի հարկէ, բացառութիւն- ների մասին չէ: Սակայն եղել են և դէպքեր, երբ եկեղեցում երկու քահանաների վէճը վեր-

ջացել է գաւառականութիւն ու խորանի դռների խորանկամար և ժողովուրդը դուրս է եկել եկե- ղեցիցը գլուխներով...

Իսկ ինչ են արել մեր հոգեւոր հայրերը մի համաձայնալի, ընդհանուր աղէտի, սովի, կարկ- տի և այլ այսպիսի պատուհանների ժամանակ: Ինչ են արել նրանք, օրինակ, մեր գրականու- թեան համար: Այս հարցերին մենք ամաչում ենք պատասխանել նոյն իսկ տոկոսային հաշ- տով, որովհետև եղած բացառիկ դէպքերը այն- քան փոքր տոկոս են կազմում մեր հոգեւորա- կանների քանակութեան համեմատութեամբ, որ ինչը անգամ չենք ուզում, թէ և նրանք դիա- հատված են առանձին:

Այս կէտը մեզ առիթ է տալիս մի հարց ևս տալ: Ինչ է շինում ապա մեր կուսակրօն հայրը իր վանքում. միայն աղօթում է: Իսկ այն հաղ- ւաղիւտ ձեռագրերները, այն թանգազին մա- տենները և մեր հայնեաց մեծութեան իշա- տակները միթէ փոշում և ցեցին մատնված պի- տի միան յաւիտեան և չը պիտի լինի մէկը, որ մեզ ծանօթացնի նրանց հետ: Փաղաքակրթ ղախարհում այդ բանը անուսմում են բարբա- րութիւնը: Եւ միայնի մատենադարանի թան- գագին ձեռագրերները մինչև այսօր միմայն ե- րեք մարդու լուրջ ուսումնասիրութեան նիւթ են դարձել. իսկ այդ մատենադարանը շարու- նակ Վանետիկի և Վիէնայի Միջնաբերաննե- րի արտօման է գրգռել և գրգռում է: Ձեռա- գրերների քանակը այնտեղ այնքան մեծ է, որ ու- սումնասիրների մի խումբ գուցէ երկու տարի- ներ ուսումնասիրեն և չը կարողանար վերջացնել: Մինչդեռ Վանետիկի և Վիէնայի Միջնաբերան

հայրերը տարեցտարի խոշոր հատորներով լայն են ընծայում իրանց ուսումնասիրութիւնները, մինչդեռ նրանք եղած նիւթերը մշակած ունե- նալով փոքր են մայրամէջ նոր նիւթեր ձեռք բերելու, մերոնք եղածն անգամ չեն ուղում մշա- կել և տարէնք մի գրացուցակ կազմելով են- թաղում են թէ դա է ուսումնասիրութիւնը: Մինչդեռ Գլխային թիվի հարապատկեան, Խո- րենացու Դ թէ Կ Պ դարում լինելու, Ներսիս Ծնորդաւու և Ներսիս Լամբրոնացու մասին վե- նետիկցիները յօդուած յօդուած, ուսումնասի- րութիւն ուսումնասիրութեան ետեղի էին բաց թողնում, մերոնք նստած էին հանգիստ և Եջ- միամիտ օրացոյցների համար իրանց խոցելուով ուսումնասիրներ էին թխում: Մինչդեռ լինելու, Դուրբի, Դուրբի, Դուրբի և այլ բանասերները հրատարակում էին մեր մատենագիրների՝ ինչ- պէս Ներսի, Ներսի, Խորենացի, Աղաթանգե- ղոս, Սեբէոս, Վաղանկատուացի և այլ ուսում- մասիրութիւնները, մերոնք գոնէ այդ մատե- նագիրների շատ ձեռագրերի համեմատական տպագրութիւնը չը տուին: Այդ անշարժութիւնը, այդ անտարբերութիւնը մենք որքան էլ չուզենք խոստովանել, պէտք է վերաբերենք մեր հոգեւոր հայրերի տղիւնութեանը:

Բայց ինչու միջոց չը տալ ձեռնահաններին պա- րագելու այդ օգտաւէտ գործով, ինչու գրկել նրանց այդ գանձերը հրատարակելու բաւակա- նութիւնը: Մենք չենք հասկանում պատճառը: Գուցէ առարկեն թէ ցանկացող չը կայ, խեղք գլխին մարդ չը կայ և այլն: Այդ իբրւ է, և չի լինի ցանկացող, քանի որ խրախուսող էլ չը կայ: Դեռ 1893 թ. երբ մեր վարդապետները

Ստ. Մաղանեանց

յիւնիսի գլխին, խառն բազմութեան առաջ, որոնք ցորեններն ամբարեկով աղբառնին զրկանք են պատճառում: Ներկայ եղող հարուստները ծածուկ վրդովեցին. բայց ազատամիտ սէյդը մինչև վերջը աներկիւղ շարունակեց իր քարոզը: Թշուառութիւնը ճաշակող ուսմիկ դասը հեռաբերութեամբ էր խում քարոզչի խօսքերը: Արդարեւ այն օրից, երբ գիւղերը սեփականութիւն դարձան այս ու այն մուշտալիկին, այս ու այն հարուստ կապիտալիստին, Թաւրիզի հրապարակը դատարկ է հայանատիկից. իսկ փռնեղում այնպիսի հաց է թխվում, որը սովի օրերում ուտել չէ լինի: Առատութեան տարին հերոսն այսօրինակ պակասութիւն և ստորնադոն հացի տեսակ, զարմանալի է: Թաւրիզի պէս աղքատ հասարակութիւն ունեցող մի երկրում ամեն օր չփութութիւններ կարելի է սպասել: Երևում է, որ ամբողջ քիչ-քիչ հասկանում է իր արհմը ծծողին:

Հեռավորը Թէհրանից լուր բերեց, թէ էմիրը Գովան պաշտօնանկ է եղել: Նախկին սադրազամը, Մուհարրէմից երկու օր առաջ, հասել է Թէհրան:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Աւստրիական մամուլը սաստիկ կատաղել է, որ Ձերնագործայի իշխան Նիկոլայ Գլադստօնի մահվան առիթով գրած նամակի մէջ յիշատակել է այն օգնութեան մասին, որ արել է Գլադստօնը Ձերնագործային Վիեննայի լրագրիչները այդ ակնարկի մէջ տեսնում են վերադարձը Աւստրիայի հասցէին և հրաւիրում են աւստրիական կառավարութիւնը բաւարարութիւն պահանջել իշխանից: Բայց այդ աղմուկը անտես է անում Ձերնագործայի իշխանը:

Այժմ, երբ թիւրքաց զօրքերը հեռանում են Թեսալիայից, յայտնի է դառնում թէ նրանք ինչ աւերածնունդ են գործել իրանց գրաւած երկրի մի քանի տեղերում: Շատ գաւառների փախստականներ, որոնք այժմ սկսել են վերադառնալ, այլ ևս չեն գտնում ոչ տուն, ոչ եկեղեցի, ոչ անտառ, ոչ արօտ: Ամեն ինչ ոչնչացրած է: Գովանի 900 տներէից մնացել է այժմ միայն 34, այն էլ ամենաթշուառ դրութեան մէջ: Այսպէս աւերված են և այլ քաղաքի չլքվածները. մեծ շէնքերն են կրել նաև Ֆարսայի ու Լաքիայի գաւառները:

Աւստրիական պարլամենտում դարձեալ սկսվել են անկարգութիւններ, այնպէս որ բէյլիս-րատի նիստերը յետաձգված են առժամանակ:

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Թիֆլիսի քաղաքապետ Գ. Եւանգուլով, ինչպէս այլ երեւում է դուրսի վերջին նիստի հրապարակված արձանագրութիւններից, իբրև նախագահ հասել է այն վիճակին, որին նախանձել կարող է նոյն իսկ Իրանի ամեն մի խան: Մուսուլմանութեան պարսն քաղաքապետը, որ ժողովի տեղը դուրսին է ոչ թէ նախագահը՝ իր «կարգիւն», «կը գրկեն», «թող չեմ տալ», «կը դիմեմ...» բացականչութիւններով... Կայ մի սահման, որից անցնողը դառնում է ոչ թէ ազգու, այլ ծիծաղելի: Դա չը պէտք է մոռանալ...

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՌՈՒՍՅՑ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՅՑ

ԱՄԵՐԻԿԱ-ՍՊԱՆԻԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ

ՄԱԿԻԻԻ, 2 յունիսի: Մասնաւոր հեռագիրը Մանիլայից նկարագրում է դրութիւնը բարեկեցութեամբ: Թէպէտ նախագում պատմարութիւն է տիրում, բայց մայրաքաղաքը մեծել է դիմադրութիւն ցոյց տալ: Հասարակական ոգին գերազանց է: Պաշտպանողական ոգի դրեղացրած է. կամաւորների նոր բաժանումներ են կազմակերպված: Ապստամբները չեն վառանալ: Երբ յարձակում գործել այն կէտի վրա, որ դրոն-վում են ուստիսի պաշարներ երկու ամսվայ համար: Դեպք յարձակում չի գործի, մինչև օգնական զօրքեր չը գան:

ՆԻԻ-ԵՐԿ, 2 յունիսի: Գլխաւորամասնում ուրբաթ օր այն իշած ծովային սլոնքը երկվայ երկուրից կուռ սկսեցին մղել սպանիական կահուստը զօրքերի և գլխիւնանների հետ անընդհատ 13 ժամ: «Մարբէն-Է» կրէյսերը այն իջեցրեց օգնական զօրքեր: Որքան յայտնի է, 4 ամբերկացիներ են սպանված և 1 հոգի վիրաւորված է: Սպանիացիների կորուստները անյայտ են:

ՆԻԻ-ԵՐԿ, 2 յունիսի: «New-York-Herald» լրագրին Վաշինգտոնից հեռագրում են. «Մանիլան անձնատուր եղաւ: Պաշտօնական չըջանները չը գիտեն, սակայն, թէ անձնատուր է եղել ծովապետ Դեյվիսը, թէ ապստամբներին: ԼՕՆԿՕՆ, 2 յունիսի: ԼՕՆԿՕՆԻ ամերիկական դեսպանը հերքում է «New-York-Herald»-ի հա-

ղորդած տեղեկութիւնը, որ իբր թէ դեսպանը հեռագրով Նիւ-Եօրկ հաղորդեց Մանիլան վերջնելու լուրը:

ՊԵՏԵՐԲՈՒԴ, 2 յունիսի: Ներքին գործերի մինիստրը որոշեց՝ դադարեցնել «Востокъ Край» լրագրի հրատարակութիւնը ուժ ամսով: Յունիսի 1-ին Պետերբուրգ հասաւ Սիամի թագաւորի երկրորդ որդին, պրինց Չակրարօն: Յունիսի 1-ին Բուխարայի էմիրը իր ավտա-յով ճանապարհ ընկաւ Պետերբուրգից:

ԿԻԵՎ, 2 յունիսի: Մայիսի 31-ի զինքը խորտակեց ամառանոցային գնացքը Կիևից 7 վերստ հեռավորութեամբ: Սպանվածներ չը կան, վնասվեցին 17 հոգի, որոնց թւում 15 ճանապարհորդներ. 8 ծանր վիրաւորվածներ տեղաւորված են երկաթուղային հիւանդանոցում, Կիև-վում:

ԲՈՒԷՆՍՈՒ-ԱՅՐԵՍ, 2 յունիսի: Գեներալ Բօկա Արգենտինեան հանրապետութեան նախագահ է ընտրված:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒԴԻ ԲՈՐՍԱ

Յունիսի 2-ին		
ԼՕՆԿՕՆԻ վրա 10 ֆունտ արծէ	94	բ. 45 Կ.
Բեքլինի վրա 100 մարկ	46	" 27 1/2
Պարեյի վրա 100 ֆունտ	37	" 40
Պոլոնսկիեի վրա	"	"
Մարաշի իւրաքանչիւր	149	"
Քոստայի դեւիտ	5	6 1/2
4% պետական ընտա	102	"
4% ներքին փոխառութեան	100 1/2	"
4 1/2% դրաւ. Թղթ. աղի. կալ. բանկ	"	"
4 1/2% վալայ. դեւ. Զոլ. բանկ	100 1/2	"
Ներքին 5% առաջին փոխառութ.	286 1/2	"
Նոյնը	248	"
5% դրաւ. Թղթ. աղի. կալ. բանկ	217 1/2	"
5% պետական երկաթուղ. ընտա	"	"
Պետերբ. քաղ կը. ընթ. օրը. 5%	100 1/2	"
Մասիլայի քաղաք. կը. օրը Եւրոպայի	101 1/2	"
Օղէսայի	100	"
Թիֆլիսի	100 1/2	"
Թիֆլիսի կալ. բանկ 6%	"	"
Նոյնը	5%	"
Քուլթայի կալ. բանկ 6%	"	"
Նոյնը	5%	"

Խաղաղի՝ ԱՆԻՔՍՆԵՐԻ ՔԱՂԱՆՈՒՐ
Հրատարակիչ՝ ԱՆԻՔՍՆԱ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱԿՈՐ ՀԻՄՆԵՐԱՆՈՑ
Բ. ՆԱԽԱՍԱՐԳԻՆԵՐ
(Կուրիա, Վօրոնցովի արձանի հանդէպ)

Հիւանդներին ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից:
ԱՌԱՍՏՆԵՐԸ

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԻՆԵՐ—11—12 ժ. վիրաւոր-
մութեան, վնասակար (սիֆիլիս) և միզախեռ. հ.

Գ. Մ. ՁԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և
նեղարկային հ.

ԿԻՆ ԲԻՇԿԱ. Ի. ԲՈՒԿԵՆԿՈ—10 1/2—11 1/2 ժ. կանանց և երեխայից հ., ծաղկի պատուա-
տուն:

Զ. Ի. ԲԱՐԱՆԱՍԵՆՅԱՆ—11 1/2—12 ժ. կա-
նանց հիւանդ:

Ի. Ֆ. ՊՐՕՏԱՍԵՎԻԶ—12—1 ժ. ախտի, կու-
կորդի, քիթի և կրծքի հ.

Ա. Պ. ԿԱՐԱՊԵՏԵՆՅԱՆ—1—1 1/2 ժ. ներքին և
երեխայից հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՈ—1 1/2—2 1/2 ժ. ներքին, և մի-
զախեռական հ.

ԵՐԵՎԱՆԵՐԸ

Վ. Մ. ՄԱՍԿՈՎԱՆ—5—6 ժ. ներքին և երե-
խայից հ.

Բ. Ա. ՆԱԽԱՍԱՐԳԻՆԵՐ—6 1/2—7 ժ.

Ա. Ն. ՇՊԱԿՈՎԱՆ—6—7 ժ. նեղարկային (ե-
րեխայից ծնունդ), վնասակար և մարմնի հ.

Տ. Ի. ԲՈՒԿԵՆԿՈ հիւանդանոցում քիմիական և
խոշորացուցական հետազոտութիւններ է ա-

նում մէղի, խիլի, արեւան, կաթի և պղնձ:
Վճար 50 կ. չքաղաքները ձրի: Համալսարանի
(կոնսիլիումի) և օպերացիայի համար առանձին:

Հիւանդանոցի վերադասութիւնը:
124—150 Բժշկապետ ՆԱԽԱՍԱՐԳԻՆԵՐ

ԿԿՈՎԿԱՆԵԱՆ գրաւաճառանոցը—Զ.աբ.
Գրիգորեանցի

Հրատարակութեամբ լոյս տեսաւ.

«ԱՂՈՐՔՆԵՐ, ԳՆԵՔԼ ՄԱՐԿԵՐԻ ԳԻՐԸ ԵՒ ՍՈՒՐԸ
ԹԵՆԻՔՆԵՐ ԺՐՈՂԱՆՈՑԻ ԵՐԿԵՐ»

3 պատկերներով. գինն է 7 կ.: Գումարով դը-
նդներին 20% զեղչ է անվում:

ԼՈՅՍ ԵՒ ՍԱԼ

ՍՏԵՓՈՒՆ ԱՆԵՏԻՔԵՆԵՐ-ԲԱՆԱՆՏԵՑՈՒ
ՆԱԽԱՍԱՐԳԻՆԵՐ

ԳԻՆԸ 20 Կ.

Դիմել՝ Թիֆլիս, Центральная книжная торговля.

Նոյն տեղ վաճառվում են նոյն հեղինակի
Ղեկավարներ, գիրք ա.

Սամարանի 40 Կ.

Մամուլի տակ է նոյն հեղինակի «Բրաւուրա-
յի դատը», գինը 80 կ.:

ԹԻՖԼԻՍԻ ԱՐԺՈՒՆԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

Շարաթ օր, յունիսի 6-ին

Կօնցերտ-ներկայացումն


Տ. ՄՕՆՏԻ ԲՐՈՒՆԵՐԻ

Մասնակցութեամբ պ. ՌԷԼԻՐ ԱՄԻՐՋԱՆԵՆԻ


Տոմարները ծախվում են Դօրքօվայա փողոցի վրա, Դեղուկ օվի մագաղիմում. իսկ ներկա-
յացման երեկոյան՝ թատրոնի կասսայում: Գնե-
րը—դրամաւարկան:

1—3

ԱՄԵՆԱՅԱՅՏՆԻ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐԻ




ԲՕՑԵԱԼՆԵՐ



ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ



ՖԻՍ-ՀԱՐՄՈՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ, ԿԻ-
ԹՈՒՆԵՐ, ՖԼԵՏՏՆԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՉԱՅ-
ՆԱԽԱՂԵՐ, ԼԱՐՆԵՐ, ԵՒ ԱՅԼՆ, ԵՒ ԱՅԼՆ:



Բոլոր տեսակ գործիքների համար գի-
նը կարելի է վճարել մաս-մաս:
ՆՈՐ-ՊՐԷՏԿԱՆՈՒՐԱՆՏՆ

ուղարկվում է ձրի:

ԵՐԱՅԱՅԱՅԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՉԱՅՆԱ-
ԽԱՂԵՐԻ ԿՈՎԱՍՏԱՆ-ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ

Դ Ե Պ Օ

Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵՆԵՐԻ

Մատակարար Կապիտալիստ Երաժշտական
Ընկերութեան

Музыкальное дело Б. М. Мириманяна,
ТИФЛИСЬ.

Дворцовая ул., д. Т. Д. З. Банка.
16—20

ԹԻՖԼԻՍ-ԿԱՐՍԻ ԵՐԿԱՐՈՒԴԻՆ ԿԱՌՈՒՅՏՆՈՂ ՎԱՐՁՈՒԹԻՒՆԸ

Երաժշտութեան, որ Սանահին կայարանից մինչև Բօրջալուի գաւառի Ուղտնյար գիւղը
Հոյակն ճանապարհ շինելու աշխատանքներ յանձն առնել ցանկացողներին մասին յայ-
տարարութեան մէջ մի սխալ է մտել, այն է, որ վերջիվերջաւ աշխատանքները յանձն
առնելու համար յայտարարութիւններ տալու ժամանակամիջոցը նշանակված է ոչ թէ
1898 թվի յունիսի 10-ը, ԱՅԼ 1898 թի ԶՈՒԼԻՍԻ 10-ը:

2—3

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET C-10

ՖԻՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ն. ՊԱԿԵ ԵՒ ԸՆԿ.

Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն ՄԱՐՍԷՅԼԻՅՑ ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկու շաբա-
թը մի անգամ, սկսած յունիսի 25/6-ի չորեքշաբթից,
և հաջորդաբար՝ Բաթումից Մարսէյ, մասնով Տրապիզոն, Սամսոն և Պոլս: Մեկնում է Բաթում-
միջ չորեքշաբթի, 10/22 յունիսի ՄԻՆԳՐԵԼԻ չորեքշաբթի, նաւագետ ՇԷԼՏ: և այսպէս շա-
բաթաւորաբար, երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, ժամը 4-ին ճաշից յետոյ:

Բաթումից Պարսի ուղղակի չորեքշաբթի կանոնաւորութեան տրվում են սովորականից
պակաս գնքերով:

Ապրանքների և ճանապարհորդների մասին հարկաւոր տեղեկութիւններ տալու համար
թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակալներին:

ԲԱԹՈՒՄԻՍՏ—պ. Վիկտոր Գ. Արնօն, Նաբէրէժնայա: ԹԻՖԼԻՍԻՍՏ—պ. Օ. Գ. Բարեկենդա-
նեանին, Սիմի փող. նախկին Արքունու քարանձաւում: ԲԱԳՈՒ—պ. Ս. Դիւրարեանին, Կօլլաբե-
կանայա հրապարակ: ՆՕՎՈՐՈՍՏԻՅԱՎ—պ. Միլիտօր Հերշթորֆերին: (Կ. հ. չ.) 15—20

ՌԻՍՈՒՄՆԱՐԸՆ—ՊԱՆՍԻՈՆ

Ա. ՏԵՐԶԱԿՈՎԵԱՆԻ

Ընդունում է երթեկ, կիսաթոշակաւոր և գիշերօթիկ աշակերտներ: Պատրաստում է
գիմնազիական երկ, կադետներ, կօրպուսի, դեմէլմէրներ, բէալական և
այլ ուսումնաւորական երկ համար:

Փոքր պատրաստականութեան երեխաները ընդունվում են առանց ջնդութեան, վեց տա-
րեկանից սկսած: Ուսումնաւորանում ուսուցչական են բարձրագոյն ու-
սումնաւորում մասնագէտներ, գիմնազիական ուսուցչական շինք: Առան-
ցիկ աւարականներ են՝ կրօն, ուսուցչ, հայոց, ֆրանսիական, գերմանական, լատինական,
յունաց, վրաց լեզուներ, թուրքական, արաբական, երկրաչափութիւն, աշխարհագրու-
թիւն, պատմութիւն (ուսուցչ և ընդհանուր), բնական գիտութիւն, նկարչութիւն, գրու-
թիւն, երգեցողութիւն:

Հասցէն. ТИХЛИСЬ, Гановская ул., № 11, 3-րդ գիմնազիայի մօտ: (հ.) 7—10